

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստերիլու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

633.3

թ-88

№ 48 «ԳՅՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 48

Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Վ Ի Կ

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1928



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԷԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի  
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

- 1. Ուղեցույց անհառային աշխատավորի 50
- 3. 2. Փիրուսյան յեվ Ս. Մելիսյան—Ինչու ձեռնառ յե գործարանում լուղ և շվեյց պանիր պատրաստելը (սպառ.) 1
- 4. 2. Փիրուսյան Խոտարույները և նրանց մշակութային յեղանակները (սպառ) 10
- 5. Խ. Ս. Վզալբեգյան Հ. Խ. Ս. Հ. Հողային Որենագիրքը, բացատրական հարց ու պատասխաններով, մասն առաջին, աշխատավորական հողագործություն (սպառված) 40
- 6. Պ. Հեֆիմյան.— Թթենու մշակությունը 10
- 7. Պ. Հեֆիմյան.— Շերամի վորդը, նրա կերակրելն ու խնամքը 10
- 8. Խ. Յերիցյան.— Կաթնատնտեսության գործնական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ա. 50
- 9. Կ. Մելիք-Շահնազարյան.— Ծխախոտի մշակությունը 2
- 11. Խ. Յերիցյան.— Անհատական, թե՛ կոոպ. կաթնատնտեսություն 1
- 12. Հ. Հարություն.— Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառ) 1
- 13. Մ. Թումանյան.— Շարքացանքը և նրա նշանակությունը 1
- 14. Խ. Ս. Յեր-Ներսիսյան.— Ինչպես մշակել խաղողի այգիները (28 նկարով) (սպառ.) 38
- 15. Յերեսներս դեպի գուղ.— Անդրկովկասյան Յերկրային կոմիտեի բանաձևը գյուղացիական հարցի մասին, [redacted] 1
- 16. Հայաստանի կոմմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի Չորրորդ Պլենումի Բանաձևերը (սպառված) 1

633-3  
Թ. 88  
48

Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

1003  
10990  
ՈՃՈՒ

4 1 4





**ԻՆՉ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ ԷՆ ՄՇԱԿՎՈՒՄ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Անասունների կերի կարիքը Խ. Հայաստանում շատ մեծ է. բացի մի քանի շրջաններից, նրա պակասը զգացվում է համարյա թե ամեն տեղ:

Կերով ապահովված չեն վոչ միայն մեր դաշտավայրի և մանավանդ նախալեռնային շրջանների գյուղերը, այլև մեր լեռնային գոտու գյուղերից շատ շատերը:

Խ. Հայաստանի Հողօդկոմատի տվյալները ցույց են տալիս, վոր մեր գյուղացիութունը իր տավարը, նույնիսկ կիսաքաղց դրությամբ պահելու համար՝ ամեն տարի 6 միլլիոն փութ խոտի և մեկ միլլիոն փութից ավելի դարձանի բաց ունի:

Ինքնին պարզ է, թե կերի այս խոշոր պակասը ինչպես պիտի անդրադառնա մեր լեռկերի անասնապահության դրության ու նրա զարգացման վրա:

Ինչ պիտի տա դարձանով պահած կիսաքաղց կովը, կամ ինչ աշխատանք պիտի կատարի նիհար ու սոված լըծկանը:

Կաթի այն չնչին քանակը, վոր տալիս է մեր կովը, մեծ մասամբ սնունդի պակասության հետևանք է միայն:

Խ. Հայաստանն ընդհանուր առմամբ համարվում է անասնապահական լեռկիր և նրա գյուղատնտեսության զարգացումը պիտի ընթանա այդ ուղղությամբ: Իսկ անասնապահության զարգացումն ու բարձրացումը ապահովելու համար ամենից առաջ պիտի մտածել կերի մասին:

Կերի հարցը, սակայն, քիչ-շատ բավարար կերպով լուծելու համար անհրաժեշտ է գիմել խոտացանության, իսկ



վորտեղ հնարավոր ե՛ նաև արմատապտուղների ու պտու-  
լարապտուղների մշակութային:

Բայց, գծախտաբար, պետք է ասել, վոր Ս. Հալապա-  
նուն խոտաբույսերի մշակութայինը շատ բիշ է տարած-  
ված: 1925 թ. 280,000 դես. ցանքերի ընդհանուր  
տարածութայինից խոտաբույսերով բռնված էր միայն  
3.000 դես., կամ ցանքերի ամբողջ տարածութային մաս  
1% -ը, վոր ինքնին շատ չնչին է:

Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, վոր խո-  
տաբույսերի այդ 3000 դես. ցանքերից հազիվ միայն 3% -ը  
էր անջրգի հողերում մշակվել, իսկ մնացած բոլոր ցանավի-  
խոտերը մշակվել են ջրաբքի հողերում:

Բոլոր տեսակի ցանավի խոտերից մեկ մոտ ամենից  
շատ առվույտն է տարածված, վոր մշակվում է համար-  
յա բոլոր շրջաններում, մասնավորապես դաշտավայրում և  
նախալեռնային գոտում:

Առվույտը լավ բերք է տալիս միայն այնտեղ, վոր-  
տեղ նա բավարար չափով ապահովված է ջրով: Հողագիտ  
ու կլիմայական չոր պայմաններում նա լավ արդյունք չի  
տալիս: Այդպիսի տեղերում միայն կորնդան է, վոր քիչ-  
շատ լավ բերք է տալիս:

Յեթե առվույտի մշակութայինը հայտնի չէ համար-  
յա բոլոր շրջաններում, ապա նույնը չի կարելի ասել կո-  
րնդանի մասին: Վերջինս մշակվում է նախալեռնային և  
լեռնային գոտիների մի քանի գյուղերում, այն էլ շատ քիչ  
տարածությամբ: 1926 թվին կորնդանի ցանքերի տարած-  
ութայինը հազիվ 100 դես. էր հասնում:

Միևնույն անունով ավելի հարուստ և խո-  
նավ շրջաններում (Փամբակ-Լոռի և այլն) իբրև փորձ  
չեբեքնուկ էլ է ցանվում, վորի ցանքերի տարածութայինը  
հազիվ մի չերկու տասնյակ դեսյատին լինի:

Ահա, գլխավորապես, այն բազմամյա խոտաբույսերը,  
վորոնք մշակվում են մեկ մոտ:

Ընչ վերաբերում է միամյա խոտաբույսերին, պիտի  
ասենք, վոր նրանց մշակութայինը մեկ մոտ համարյա  
հալապա- չէ: Միայն վերջին տարիներս փորձեր են կա-  
տարվում վիկ, շամբալա և սուդանի խոտ ցանելու:

Մինչդեռ, միամյա, մանավանդ թիթեռնածաղիկնե-  
րի ընտանիքին պատկանող խոտաբույսերի մշակութայինը  
մեծ նշանակություն ունի անասնապահության և ընդ-  
հանրապես գյուղատնտեսության զարգացման համար:

Այս գրքուկում մենք կխոսենք միայն վիկի մշակու-  
թյան մասին և կպարզենք, թե նրա մշակութայինը վորքան  
կարևոր է մեր չերկրի գյուղատնտեսության համար:

### ՎԻԿԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վիկը թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող  
միամյա խոտաբույս է. նա պատկանում է այն խմբին, վո-  
րին պատկանում են լոբին, վոսպր, սիսեռը, մաշը և այլն:

Վիկը մշակվում է թե խոտ և թե սերմ ստանալու  
համար. նա գործ է ածվում թե իբրև կանաչ կեր և թե  
իբրև չոր խոտ:

Վիկի ամենապլսավոր առավելությունն այն է, վոր  
նա տալիս է ամենալավ վորակի, նուրբ և մնեպարար խոտ:  
Յեթե նկատի ունենանք, վոր խոտի մեջ յեղած ամենա-  
արժեքավոր մասը սպիտակուցներն են, ապա պիտի  
ասենք, վոր դրանցով ավելի հարուստ են վիկի տե-  
սակները, մանավանդ «թավոտ» վիկը (мохнатая вика),  
քան չեբեքնուկը կամ մյուս խոտաբույսերը:

Էստ Պարտավալի փորձնական կայանի տվյալնե-  
րի, 1 դեսյատին չեբեքնուկի բերքի մեջ գտնվում են  
մոտ 33 փուլ սպիտակուցներ, իսկ 1 դես. թավոտ վիկի  
բերքի մեջ՝ 41 փուլ սպիտակուցներ:

Սպիտակուցներով շատ հարուստ է նաև վիկի սերմը,  
վոր գործ է ածվում իբրև կեր տավարի և ձիերի համար, և  
ընդհանրապես ուժեղ կեր է համարվում: Այս տեսակե-



տից նրա սերմը նմանվում է վիկերի խմբին պատկա-  
նող և մեր լեռնային շրջաններում մշակվող ու իբրև կեր  
գործածվող քուռուշնային (*Vicia ervilia*):

Հայտնի լեն վիկերի սպիտակ սերմեր ունեցող տե-



Նկ. 1. Սովորական վիկ

սակները, վորոնք գործածվում են իբրև խառնուրդ՝ հաց  
պատրաստելու համար:

Վիկի ցողունները կանգուն են միայն զարգացման  
սկզբնական շրջանում, մի քիչ հետո նրանք փոփոկվում,

վորովում ու պռուկում են, յեթե իրենց համար հենարան չեն  
գտնում:

Վիկի տերևները փետրածե են բաղկացած 12-14 տերե-  
վիկներից, լերկարավուն կամ հակադիր ձվածե ու բուլթ  
վերջավորութլամբ: Տերևներն վերջանում են ճյուղավոր-  
ված բեխիկներով, վորոնց միջոցով ել նրանք կաշում են  
հարևան բույսերից:

Սովորաբար վիկի ամբողջ բույսը, այսինքն ցողուն-  
ներն ու տերևները ծածկված են լինում զանազան խառու-  
թյան մազմուզակներով: Տերևակիցները լինում են 2 տե-  
սակ՝ հասարակ և մատածե կտրտված, ճյուղավորված:

Ծաղիկները սովորաբար լինում են կապտավուն և  
մանիշակագույն, բայց պատահում են նաև սպիտակ, վար-  
դագույն և այլ տեսակները:

Սովորական վիկի — *Vicia sativa* — ծաղիկները՝ թվով 1-2  
հատ գտնվում են շատ կարճ կոթերի վրա, տերևների բը-  
նում: Ծաղիկների բաժակը կանոնավոր է: Վիկը բեղմնա-  
փորվում է խաշածե և նրա բեղմնավորման մեջ մեծ դեր  
են կատարում մանր միջատները:

Մշակվում են վիկի բազմաթիվ տեսակներն ու այլա-  
տեսակները, ինչպես՝ սովորական վիկ (*Vicia sativa*), թա-  
վոս վիկ (*Vicia villosa*) հարբոնի վիկ (*Vicia narbonnensis*)  
և այլն:


Հայտնի լեն վիկի գարնանացան և աշնանացան բասանե-  
րը, կան նրա շուս և ուշ հասնող, ինչպես և բազմամյա,  
միամյա և այլ ձևերը:

Թավոս վիկը սովորական վիկից տարբերվում է նը-  
րանով, վոր նրա լերկար կոթի վրա գտնվում է վողկույ-  
զածե ծաղկափթյուն, բաղկացած բազմաթիվ ծաղիկներից:  
բացի այդ, զրա ամբողջ բույսն ել ավելի մազոտ է, քան  
սովորական վիկինը: Ծաղկի-բաժակը անկանոն է և այլն:

Թավոս վիկը սովորականի հետ համեմատած՝ ավելի լե  
ն տեղացած հողային և կլիմայական չոր պայմաններինը



մինչև իսկ բանում և ավագային հողերում: Պետք է ասենք, փոքր վիկերը հողերի վերաբերմամբ առնասարակ այնքան ել պահանջկոտ չեն և շատ քիչ հողեր կան, փոքրոնց նրանք դժվարությամբ ընտելանան (այսպես, որինակ, շատ խոնավ կամ շատ ծանր կավահողեր):




Նկ. 2. Աշտանացան թավոտ վիկ

Վիկը հացաբույսերի համեմատությամբ լավ զարգացող և խոր գնացող արմատներ ունի, փոքրոնք ավելի շուտ են սպառազործում հողի մեջ յեղած հանքային նյութերը:

Վիկի, ինչպես և մյուս թիթեռնածիկների արմատ-

ները վրա գտնվում են մեծ քանակությամբ պալարիկներ, փոքրոնք հոգն ազոտով պարարտացնելու գործում մեծ դեր են կատարում: Այս պալարիկների մեջ գտնվող բազմաթիվ բակտերիաներն սպառազործում են ողի մեջ յեղած ազատ ազոտը, փոքր, վերջին հաշվով, բորակի չե վերածվում: Իսկ բորակը, ինչպես հայտնի չե, մեր բույսերի համար ամենակարևոր և անհրաժեշտ սննդանյութերից մեկն է հանդիսանում:



Նկ. 3. Վիկի արմատները պալարիկներով:

Վիկի պտուղը—ունդն է, պատիճն է, փոքր մեջ զըռնվում են 2-5 հատ սերմ: Ունդերը տարբեր մեծության և գույնի են լինում: Մշակության մեջ հայտնի են նրանց բաց դեղնավուն, դարչնի և սև գույնի տեսակները:

Սերմերը լինում են կլոր, անկուռնավոր սև ու սպիտակ գույնի, սոխրագույն, կանաչագույն և այլն:



Բույսերը լինում են  $\frac{1}{2}$  արշինից մինչև 1 արշին բարձրությամբ, իսկ լավ հողերում ել ավելի են բարձրանում:

### ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՅՅԱԼՈՒՄ ՅԵՎ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Վիկի մշակութունը հայտնի յե շատ հին ժամանակներից: Մեզանից մոտ 2 000 տարի առաջ հռոմայեցիք վիկ մշակելիս են յեղել. մոտավորապես նույն ժամանակներում նրա մշակութունը հայտնի յե յեղել նաև Հրնդկաստանում:

Հարավային Յեվրոպայից վիկը հետոհետև անցել է գեպի Ֆրանսիա, Գերմանիա և այլն:

Ռուսաստանում նրա մշակութունն սկսվում է 18-րդ դարու ութսունական թվականներից:

Ներկայումս վիկի մշակութունը տարածված է ամբողջ Յեվրոպայում, Ամերիկայում, Պորթրիկային Միության մի շարք հանրապետություններում և այլն:

Յեթե սովորական վիկը մշակվում է շատ վաղուց և հանրածանոթ է, ապա նույնը չի կարելի ասել թավոտ վիկի մասին: Սա համեմատաբար նոր մշակույթ է:

Թավոտ վիկն առաջին անգամ սկսել են մշակել Անգլիայում՝ 1815 թ., Գերմանիայում՝ 1857 թ., Ֆրանսիայում՝ 1890 թ., Հյուսիսային Ամերիկայում՝ 1847 թ.:

Ռուսաստանում թավոտ վիկ սկսել են մշակել 1886 թ., այսինքն սովորական վիկից մոտ 100 տարի հետո: Այստեղ նա մշակվում է գլխավորապես արևմտյան և կենտրոնական նահանգներում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա պիտի ասենք, վոր վիկի մշակութունն ինչպես մեզ մոտ, նույնպես և Անդրկովկասյան մյուս հանրապետություններում համարյա նորութուն է: Ասում ենք համարյա, վորովհետև 1914 թ., պատերազմից առաջ, սորորական վիկը շատ քիչ շափերով

մշակվում էր միայն Ղարսի շրջանում, վորտեղ վիկ ցանում էլին մալական գյուղերում, վորտեղից և նրա մշակութունն անցել էր տեղացի հայերին: Վիկը հայերի մոտ հայտնի է «ֆիկ» կամ «գյուլուլ» անունով:

Հեռաքրքրական է այն հանգամանքը, վոր Հայաստանում շատ հին ժամանակներից սկսած մշակվում է նույն վիկերի խմբին պատկանող քուռուշնան (Vicia ervilia):

Քուռուշնայի մշակութունը տարածված է յեղել ինչ Պարսկաստանում, Փոքր Ասիայում և այլն. հնում քուռուշնա մշակելիս են յեղել նաև հույները:

Ս. Հայաստանում քուռուշնայի մշակութունը տարածված է միայն լեռնային շրջաններում—Լենինականի գավառում, Ապարանում, Գարաբաղյայում, Զանգեզուրում և այլն: Մեր գյուղացիք քուռուշնային հատկացնում են իրենց ամենավատ հողերը, վորը և ցանքաշրջանառության մեջ բռնում է վերջին տեղը:

Քուռուշնա մշակվում է նաև հարևան Ս. Արաստանում, ուր նա հայտնի է «ուխրխելի» անունով:

Քուռուշնան մշակում են սերժ ստանալու համար: Այդ սերմերը լեռնային շրջաններում զործ են ամվում իբրև ուժեղ կեր՝ լծկանների համար:

Քուռուշնայի սերմերի մեջ վորոշ չափով կան գառը նյութեր, ուստի գյուղացիք այդ սերմերը նախքան ասվարին տալը աղում, մանրացնում են, մի քանի որ թողնում են ջրի մեջ, ապա վրան ել մի քիչ աղ շաղ տալիս: Այդ բոլորից հետո, ինչպես յերևում է, խմորում է առաջ գալիս և ջրից հանած քուռուշնայի սերմերը ազատվում են այդ գառն մասերից: Այդ սերմերը խառնելով դարձանի հետ տալիս են գլխավորապես լծկաններին:

Վորպես շատ ուժեղ կեր մեկ տավարին որական 2-3 Փունտից ավելի չեն տալիս, թեև այդ կերին սովոր՝ տավարին կարելի յե նաև ավելի տալ:



**Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԱ-ՄՈՒԼԱՆՈՏԱՅԻՆ ՎԻԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Թեև Խ. Հայաստանում սովորական ցանովի վիկի չի մշակվում, բայց ամեն մի քաղաքում կարելի յե հանդիպել նրա վայրի դրուժյամբ աճող բազմաթիվ տեսակներին:

Խ. Հայաստանի բոլոր շրջանների հացաբույսերի ցանքերի մեջ վիկին ամենասովորական և ամենատարածված մոլախոտերից մեկն է:

Դժվար թե գանվի ցորենի կամ գալու մի արտ, վորտեղ չլենն վիկի այս կամ այն տեսակները: Իսկ հաճախ վիկի այնքան շատ է լինում, վոր կարծես հատկապես ցանված լինի:

1926 թ. ամառը Խ. Հայաստանի դաշտավարութան հետազոտութան ժամանակ թե դաշտավայրերում (Վաղարշապատ, Փարաքար, Ղուրղուղուլի, Վ. և Ն. Շենգավիթներ, Աղճամպալու, Ղամարլու և այլն) և թե լեռնային շրջաններում (Ապարան, Լենինական, Լուի-Փամբակ և այլն) մենք այգիսի արտերի շատ ենք հանդիպել:

Այլ հետազոտութան ընթացքում Խ. Հայաստանի տարբեր շրջաններից հավաքած մեծ քանակությամբ ամեն տեսակի հացաբույսերի սերմերի նմուշների մեծագույն մասը, իբրև խառնուրդ, իրենց մեջ պարունակում էին վիկերի այս կամ այն տեսակները և այլատեսակները:

Բայց ամենից շատ և հաճախ այդ նմուշների մեջ թափուտ վիկին եր չերևում. սովորական վիկին ընդհանրապես թիչ եր:

Առանձին նմուշների մեջ վիկի սերմերը չերեմն շատ խոշոր սոկոս ելին կազմում:

Պետք է նկատենք, վոր գյուղացիք ընդհանրապես ժամուրթ են հացաբույսերին ուղեկցող և մոլախոտային խառնուրդ կազմող վիկերին, վորոնց նրանք «գյուլուլ» են անվանում:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր մեր գյուղերում ընդ-

հանրապես սերմացու մաքրելու սովորութիւն չկա, ուստի «գյուլուլի» բանակը ցորենների մեջ, շատ շրջաններում, տարեցտարի ավելանում է:

Բացի չմաքրած սերմացուների միջոցով, վիկերը տարածվում են նաև բնական ճանապարհով: Վիկի սերմերը ժրածամանակ չեն հասնում. բույսի վերի պատիճներն ավելի ուշ են հասնում, քան ցածրինը: Բայց ցածրի պատիճներն ել շուտ են հասնում, քան ցորենները: Հասած պատիճները բազմում են և սերմերը թափվում են հողի վրա, իսկ վերի մասերում գանված պատիճներ հնձում են և ցորենների հետ կախում: Քամուրելիս վիկի սերմերի մի մասը հողի և մոլախոտերի այլ սերմերի հետ թափվում են, իսկ մի մասն ել մնում է ցորենի մեջ:

Չանգեզուրում, Գարալագչաղում և այլ վայրերում գյուղացիք հաճախ նույնիսկ չեն ել աշխատում իրենց սերմերը մաքրել «գյուլուլից», ասելով՝ «բն, տակը ինչ կմտ, յեթե գյուլուլն ել դեն պցենք», կամ՝ «բն, մեր խոխերը ինչ ուտեն, վոր հատիկից գյուլուլն ել մաքրենք» և այլն: Ժողովրդական այս ասացվածքները արդեն վորոշ չափով ցույց են տալիս թե վիկի վայրի տեսակներն ինչ մեծ տեղ են բռնում նրա ցանքերի մեջ:

Հետազոտութիւնը ցույց ավեց նաև, վոր տարբեր շրջաններում տարածված են վիկի տարբեր տեսակները:

Այսպես, մեր դաշտավայրի ցորենների և դարուցանքերի մեջ ավելի տարածված է թավուտ վիկը, (*Vicia villosa*), թեև պատահում է նաև սովորական վիկ (*V. sativa*): Այստեղ շատ սովորական չերևուլթ է նարբոնի վիկը (*Vicia narbonnensis*), վորն աչքի է ընկնում իբր համարյա կանգուն և կոպիտ ցողուններով, խոշոր ու հաստ տերևներով և սև ու սպիտակ ծաղիկներով: Նարբոնի վիկի սերմերը շատ մեծ են, սև, թավշանման ու կլոր:

Ինչ վերաբերում է լեռնային շրջանների ցանքերին,



այստեղ ավելի շատ տարածված են սովորական վիկի-  
տեսակները:

Շատ հետաքրքրական է և այն յերևույթը, վոր տեղ-  
տեղ, մեր լեռնային շրջանների ցորենի ցանքերի մեջ  
կան նույնիսկ խամ թողած հողերում—շատ տարածված են  
բազմամյա վիկի այս կամ այն տեսակները:

Որինակ, Յելլիջուում, Գյոյ-Քիլիսայում, Նովո-Նի-  
կոլայեկայում և այլն «խամերի» խոտերի մեծագույն մասը-  
բազմամյա վիկեր են: (Vicia Variabilis) և այլն):

Հաճախ այս շրջաններում կարելի չե պատահել ահա-  
գին տարածությունների, վորոնք ամբողջովին ծածկված  
են դնդաձև, բազմամյա վիկերի խոշոր թփերով, վորոնք  
աչքի են ընկնում՝ մանավանդ, ծաղկելու ժամանակ: Այս  
շրջանի գյուղացիք նրան «խուլորս» են անվանում, և սովոր-  
ական խոտերից ընդհանրապես բարձր են գնահատում:  
Վիկի այս տեսակը տալիս է մեծ քանակությամբ հրաշալի  
ու համեղ խոտ:

Ինչպես յերևում է, այս շրջանի կլիմայական, հողա-  
յին և այլ պայմանները միանգամայն նպաստավոր են  
միամյա և բազմամյա վիկերի վորոշ տեսակների համար,  
վորոնք բնական ճանապարհով սերմվում և բազմա-  
նում են:

Այսպիսով, կարծես բույսը գալիս է մեզ ասելու, վոր ինքը  
անհրաժեշտ մշակույթ է: Շատ տեղերում մեր հացաբույ-  
սերի և մոլախոտային վիկերի միջև վորոշ մրցում են կատ-  
վում և հաճախ հաղթողը վերջիններս են հանդիսանում:

Մեզ մնում է միայն հետևել բնությունից թելադրանք-  
ներին և վայրի վիկերի բազմաթիվ տեսակներից ընտրել  
ամենաարժեքավորներն ու մշակել:

### ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է տալիս վիկը և ինչ նշանակություն ունի նրա  
մշակությունը: Վերը մենք արդեն ասացինք, վոր վիկը

տալիս է շատ լավ վորակի, համեղ ու սննդարար խոտ և  
աչքի է ընկնում մեծ բերքով. մեկ դեկտեմբերից սո-  
վորաբար ստացվում է 200—350 փ. չոր խոտ:

Այսպիսով, վիկ ցանոց գյուղացիքն իր արն-  
տեսությունը կապահովի մեծ քանակությամբ  
և լավ վորակի կերով:

Այս հանգամանքը հնարավորություն կտա  
գյուղացուին ավելի լավ պայմաններում պահել  
իր ունեցած տավարը, ավելացնել նրա թիվը և  
առհասարակ զարկ տալ անասնապահության:

Բացի դրանից, շատ տավար պահող տնտե-  
սությունները շատ ել գոմաղբ կունենան, իսկ  
այս հանգամանքն իր հերթին հնարավորու-  
թյուն կտա գյուղացուին գոմաղբով պարարտա-  
ցնելու իր հողերը, վորոնք անընդհատ մշակ  
վելու հետևանքով կորցրել են իրենց ֆիզիքա-  
կան կազմը և ուժասպառ են յեղել: Ինչպես  
հայտնի է, պարարտացրած հողերից ստացված բերքը,  
չպարարտացված հողերի համեմատությամբ՝ 25—50% -ով  
բարձր է լինում:

Հետո, վիկը, ինչպես թիթեռնածաղիկներ է  
ընտանիքին պատկանող բույս, շնորհիվ իր ար-  
մատներ է վրա գտնվող պալարիկներին և խորը  
գնացող արմատներին մնացորդներով հողը հարս-  
տացնում է բորակով: Վիկին հաջորդող մուս մշակույթ-  
ները լավ բերք են տալիս, մանավանդ, յեթե կլիմայական  
պայմանները չորային չեն:

Վիկի մշակությունը շատ ավելի մեծ նշա-  
նակություն պիտի ունենա մեր լեռնային շրջ-  
աններին համար, վորովհետև, ինչպես հայտնի է, այս  
շրջաններում ամեն տարի հողերի 1/2-ը կամ 1/3-ը մնում  
է առանց ոգտագործվելու. գյուղացիք այդ հողերը հան-  
դապացնելու նպատակով «խամ» են թողնում: Այսպես,



լեթե գլուղացին 3 դես. հող ունի, նա այդ հողամասի կամ  $1\frac{1}{2}$ -ն է մշակում, այսինքն՝  $1\frac{1}{2}$  դեսյատինը, կամ  $\frac{2}{3}$ -ը, այսինքն՝ 2 դեսյատինը, իսկ մնացածը մնում է «խամ» ու անմշակ է ամառվա ընթացքում ծածկվում է ամեն տեսակի մոլախոտերով:

Այդ հողամասերն ավելի չոր շրջանում ծառայում են վորպես արոտատեղի, իսկ ավելի խոնավ շրջաններում իբրև խոտհարք:

«Յամերը» տալիս են շատ քիչ քանակությամբ և անպետք ու վատորակ խոտ. մեկ դեսյատինից միջին հաշվով ստացվում է 1—2 սալ, այսինքն՝ 30—60 փուլ չոր խոտ, մեծ մասամբ բողկացած ամեն տեսակի անպետք բույսերից, փշերից և այլն: Այդ խամերի խոտը ինչ ասել կուզի, վոր չերբեք չի կարելի համեմատել վիկի համեղ և սննդաբար խոտի հետ:

Այսպիսով, յեթե 1 դեսյատին խամ թողած հողամասը գլուղացուն տալիս է 30—60 փ. անպետք խոտ, ապա վիկ ցանած նույն այգ տարածութիւնից նա կստանա 300—350 փ. ամենահարուստ և սննդաբար չոր խոտ:

Ուրեմն, յեթե մեր գլուղացին իր հողը հանգստացնելու նպատակով այդքան շատ հող խամ չթողնէր և այդ խամերը կամ դրանց մի մասը ոգտագործեր վիկ ցանելու համար—ապա նա թե մեծ քանակությամբ խոտ կունենար և թե ավելի լավ ու նպատակահարմար ձևով կոգտագործեր իր հողերը:

Մի չերկրում, վորտեղ ծայրահեղ հողասակավութիւն է տիրում, այդ ձևի հողոգտագործութիւնը, չերբեք հողերի  $1\frac{1}{2}$ -ը կամ  $\frac{1}{3}$ -ը խամ է մնում, պիտի միանգամայն անթուլաարելի համարել:

Այլ յերկրներում, վորտեղ գլուղատնտեսութիւնը ավելի է զարգացած և հողերը հանգստացնելու նպատակով

կով չերբեք անմշակ չեն թողնում,—ամեն տարի ել մշակում են և ամեն տարի ել շատ լավ բերք են ստանում:

Ճիշտ է, դրա փոխարեն նրանք հողերը լավ են մշակում ու պարարտացնում և, վոր գլխավորն է, ամեն տարի միևնույն հողամասում նույն բույսը չեն մշակում, ինչպես մեզ մոտ. նրանք կիրառում են կանոնավոր ցանքաշրջանառութիւն, հաշորգարար, վորոշ կանոնավորութիւններ, փոփոխելով միևնույն հողամասում մշակվող բույսերի տեսակները:

Այս տեսակեաց ել վիկի մշակութունը, մանավանդ մեր լեռնային շրջանների դաշտավարութիւն բարելավման և նրա ցանքաշրջանառութիւն կանոնավորման համար—ահազին նշանակութիւն ունի:

Ինչպես վերն ասացինք, Ս. Հայաստանի լեռնային շրջաններում անտեսութիւնը կրում է անասնապահական բնույթ, հետևապես այդ շրջանի դաշտավարութիւնն ել պիտի հարմարեցված լինի անասնապահութիւն կարիքներին: Այսինքն, բազի հացահատիկներից, այդ շրջանների ցանքաշրջանառութիւն մեջ մեծ տեղ պիտի բռնեն խոտաբույսերի և արմատա-պարարատուղիների մշակութիւնը: Ուրիշ խոսքով՝ դաշտավարութիւնը այստեղ պետք է կեր հայթաղի անասնապահութիւն համար:

Մինչդեռ մեզ մոտ հակառակն է կատարվում. այնպիսի անասնապահական շրջաններում—վորպիսիք են Ն. Բայազեդը, Ապարանը, Չանդեղուրը, Լոսին և այլն, բացառապես տարածված է հացահատիկների մշակութիւնը: Հացաբույսեր են մշակում մինչև անգամ այնտեղ, վորտեղ շատ լավ են բնում ձախդեղը, կարտոֆիլը, չերեքնուկը և վիկի բազմաթիւ տեսակները:

Ինչպես տեսնում եք, այդ շրջաններում կիրառվող չերկրագործութիւն ձևերը բոլորովին չեն համապատասխանում նրանց անտեսութիւն բովանդակութիւն, անտեսութիւն

10  
9  
8  
7  
6  
5  
4  
3  
2  
1





տիպին, վորն, ընդհանուր առմամբ, անասնապահական է:

Այդ շրջաններում անհրաժեշտ է հիմնովին փոխել դաշտավարության սիստեմը և կանոնավորել ցանքաշրջանառությունը, իսկ դրահամար պեաք է կրճատել «խամերի» և մասամբ հացահատիկների ցանքերի տարածությունը և ցանքաշրջանառության մեջ մտցնել խոտաբույսերի և ընդհանրապես կերաբույսերի մշակությունը: Ահա, այսպեղ է, վոր վիկը մեծ դեր պիտի կատարի:

Վիկը ցանքաշրջանառության մեջ մտցնելն անհրաժեշտ է և այն տեսակետից, վոր նա և հացահատիկները հողի տարբեր շերտերն են ոգտագործում: Վիկը և թիթեռնածաղիկներն յնդհանրապես ունեն ավելի խոր գնացող լերկար արմատներ, Վորոնք սնունդ են ստանում հողի ավելի ցածր շերտերից, իսկ հացաբույսերի արմատներն այնքան խորը չեն գնում և ոգտագործում են հողի ավելի վերին շերտերը:

Վիկը մի մեծ առավելություն էլ ունի. նրա աշնանացան թավոտ տեսակը (мохнатая вика) մեզ մոտ աշնանը ցանելու դեպքում վաղը քարնանը՝ ապրիլի վերջին կամ մայիսի սկզբներին հնձելու համար արդեն պատրաստ կլինի: Սա շատ կարևոր հանգամանք է. այն ժամանակ, յերբ գյուղացու խոտի պաշարը վերջանալու վրա է լինում, վիկը ոգնության է գալիս:

Կանաև միայլ կարևոր հանգամանք. վիկի ցանելուց մինչև հնձելը տեղում է ընդամենը, վոր ա վելի, քան  $2-2\frac{1}{2}$  ամիս, ուստի թե մեր դաշտավարներում և թե նախալեռնային շրջաններում, ջրաբի հողերում, ցորենները հնձելուց անմիջապես հետո, նույն տեղում, կարելի է վիկ ցանել և մինչև աշնան ցրտերն սկսելը հնձել: Այս

տեսակի ցանքերին խոզանացանք են ասում:

Այս ուղղությամբ Յերևանի գավառի Կոտայքի շրջանում մեր գյուղատնտեսների կատարած փորձերը շատ լավ հետևանք են տվել: Որինակ, խորհրդային Ջ-րդ արնտեսության մեջ (Մհուբ գյուղի մոտ), Յելզովանում, Կոտայքի շրջանի ագրոկայանի հողամասում և այլն: Այսպես, Կոտայքի ագրոկայանի հողամասում, ցորենը հնձելուց հետո, 1927 թ. ոգոստոսի 12 ին, շրջանային գյուղատնտեսը վիկ էր ցանել, վորը մինչև հոկտեմբերի կեսեր հասել էլ մոտ  $\frac{3}{4}$  արշին բարձրություն և հնձելու համար պատրաստ էր:

Նույն Կոտայքի շրջանում, Յելզովանի գյուղերիադպրոցի հողամասում գյուղատնտեսը 1380 ք. ս. խոզանատեղում, 1927 թ. ոգոստոսի 10-ին վիկ էր ցանել և հոկտեմբերի 25-ին, այսինքն՝ ուղիղ  $2\frac{1}{2}$  ամսից հետո հնձել էր և ղեսչատինի հաշվով ստացել էր չոր խոտ՝

Տրակտորով հերկած հողից—320 փ.

Արորով » » —270 փ.

Առանց հերկի՝ խոզանի մեջ

ցանած ու փոցխած հողից—202 փ.

Այսպիսով, շնորհիվ վիկի մշակության, մի ամառ վա ընթացքում, միևնույն հողամասից կարելի է ջ բերք ստանալ—ցորեն և խոտ:

Այս բոլորից բացի, կարելի է ոգտագործել և վիկի կանաչը, վորը տավարի համար հանդիսանում է շատ լավ կեր: Յելզովայում, վորտեղ տավարը հաճախ, տարին բոլոր գոմումն են պահում և հանդ կամ արոտ չեն ուղարկում—հատկապես վիկ են ցանում և կանաչ խոտով կերակրում:

Վերջապես, վիկերը կարելի է ոգտագործել հողերի կանաչ պարարտացման համար:

Իրա համար այն հողամասը, վոր պարարտացնելու կարիք է զգում—վիկ են ցանում կամ գարնանը,



կամ՝ խողանացանք են անում: Յերբ վիկն սկսում է ծաղկել, տափանի միջոցով բույսերը պառկեցնում են և գուլթանով հերկում: Գուլթանը պետք է տանել այն ուղղութիւնով, ինչ ուղղութիւնով տափանն է գնացել, հակառակ դեպքում բույսերը հողով լավ չեն ծածկվի և նրանց մեծ մասը դուրս կմնա: Վիկի կանաչը մնալով հողի տակ սկսում է կազմալուծվել և քայքայվել, հողը հարստանում է բուսական մնացորդներով և բարեփոխվում նրա ֆիզիքական կազմը:

Բացի դրանից, հողերի մեջ են մնում բույսերի մեջ գտնվող հանքային և ազոտային նյութերը:

Փորձադաշտերում կատարած փորձերը գալիս են ասելու, վոր մեկ դեպքում կանանչ պարարտանյութով պարարտացնելը, արդյունքի տեսակետից, հավասար է նույն հողամասը 2000--2400 փ. գոմաղբով պարարտացնելուն:

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄՃԱԿՈՒՄ ՎԻԿԸ

Վիկի մշակութիւնը մեր դյուրացիութիւնը դեռ նոր է ծանոթանում, ուստի դարձանալի չէ, վոր նրա մշակութիւնը մեզանում հաճախ սխալ ձևով է տարվում: Վիկը ցանում են կամ շատ նոսր, կամ շատ խիտ. ցանում են առանց վարսակի կամ գարու խառնուրդի հետ, յերբեմն ջրում են աչնտեղ, վորտեղ նա առանց ջրի էլ կարող է լավ զարգանալ և աչն: Բացի դրանից, մեզ մոտ վիկ ցանելու բոլոր փորձերը կատարված են սովորական գարնանացան վիկի տեսակների շուրջը:

Մինչդեռ, վորպեսզի մեր անասութիւնները վաղ գարնանը կեր ունենան, ավելինպատակահարմար է մշակել աշնանացան թավոտ վիկի տեսակները, մանավանդ վոր այդ տեսակներն ավելի լին ընտելացած մեր կլիմայական և հողային շոր պայմաններին, քան սովորական վիկի տեսակները:

Բացի այդ, աշնանացան թավոտ վիկն ավելի շուտ է հասնում ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին:

Նա բգատագործում է թե՛ ձմրան և թե՛ գարնան ամիսների մթնոլորտային տեղումները և առհասարակ նրա վեգետացիայի ամբողջ շրջանը՝ Չերմության տեսակետից՝ անցնում է ավելի բարեխառն և մեղմ պայմաններում: Նույնը չի կարելի ասել սովորական գարնանացան վիկերի մասին. դրանք մեղ մոտ ավելի ուշ են հասնում, շոգ չեղանակները վրա լին հասնում և վեգետացիան անցնում է ավելի անբարեհաջող պայմաններում: Ուշ ցանվելու պատճառով նրանց արժատները, մինչև շոգերն ընկնելը, լավ չեն զարգանում ու հողի մեջ խորը չեն գնում. ավելի չորային շրջաններում ջրի պակասութիւնից և չորութիւնից տուժում են: Այս հանգամանքները խիտ կարևոր են կլիմայական շոր պայմաններ ունեցող մեր նախալեռնային և լեռնային շրջանների համար, իսկ լեռնային շրջաններում՝ սովորական վիկն էլ լավ կբուսնի:

Բացի այդ, թավոտ վիկը, ինչպես վերն ասացինք արդեն, սպիտակուցային նյութերով ավելի հարուստ է, քան սովորական վիկը:

Վորովհետև վիկի ցողունները կանգուն չեն, ուստի վիկ ցանում են սովորաբար վորեւէ հացաբույսի հետ. աշնանացանի դեպքում՝ աշորալի հետ, գարնանացանի դեպքում՝ վարսակի կամ գարու հետ:

Առանց հացաբույսի վիկը պառկում ու խճճվում է և լավ չի զարգանում, թե՛ կանաչ մաստա և թե՛ սերմեր քիչ է տալիս ու դժվարութեամբ է հնձվում:

Մեկ դեպքում հողամաս ցանելու համար վճրքան սերմ է հարկավոր: Այդ կախված է մի շարք պայմաններից, ինչպես՝ հողային, կլիմայական և աչն: Բացի այդ, նշանակութիւն ունի նաև աչն հանգամանքը, թե՛ ինչ նպատակով է վիկը մշակվում, խոտ, թե՛ սերմեր ստանալու համար: Յեթե վիկ ցանվում է սերմ ստանալու համար, ապա պիտի ավելի նոսր սերմել: Այդ դեպքում, իհարկե, պիտի քիչ սերմ ցանել:



Միջակ վորակի հողերում մեկ գեսյատինին խոտի համար վերցնում են 10—12 փութ սերմ. վորի մոտ  $\frac{1}{4}$ -ը (3—4 փ.) գարի կամ վարսակ է լինում, իսկ  $\frac{2}{3}$ -ը (7—8 փ.) վեկ. ավելի պարարտ հողերում՝ վիկից կարելի է քիչ վերցնել:

Վիկը ցանում են թե շարքացան և թե շաղացան. շարքացանի դեպքում 3—4 փ. պակաս են ցանում:

Յանքաշրջանառության մեջ վիկը վոր տեղն է բռնում: Սովորաբար վիկ ցանում են այն հողամասում, վորը հանգստանալու նպատակով պիտի խամ մնա. ցանքաշրջանառության մեջ դա ամենատարածված և ամենասովորական տեղն է վիկերի համար:

Փոխանակ մի ամբողջ տարի հողամասը պարապ, առանց ոգտագործելու թողնելու, նույն տեղում աշնանից կամ գարնանից վիկ են ցանում: Յեվ շնորհիվ այն հանգամանքի, վոր վիկը և հացահատիկները ոգտագործում են հողի տարբեր շերտերը և մյուս կողմից ել վիկը հողը հարստացնում է բորակով, ուստի վիկին հաջորդող մյուս բոլոր մշակույթները միանգամայն լավ բերք են տալիս:

Սակայն ավելի լավ հետևանք է ստացվում, չեքք աչգ հողամասում աշնանացան թավոտ վիկ է ցանվում: Աշնանացան այդ վիկը ապրիլի վերջերին կամ մայիսի սկզբներին կարելի է հնձել:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր վիկը շուտ է հասնում ու շուտ էլ հնձվում, հետևապես հնարավորություն է ստեղծվում նրա զբաղեցրած հողամասն սովելի շուտ մշակելու և հետևյալ մշակույթի համար պատրաստելու: Իսկ հայտնի է, վոր ինչքան վաղ է կատարվում հերկը, ինչքան յերկար ժամանակ է հողը հերկված գրության մեջ մնում, այնքան ավելի լավ և լրիվ կերպով են տեղի ունենում հողի մեջ

կատարվող հողմնահարման, կենսաբանական և այլ պրոցեսները:

Աչգ պրոցեսների շնորհիվ է, վոր հողի մեջ կուտակվում են կուլտուրական բույսերի համար ամենաանհրաժեշտ հանքային սննդանյութերը:

Պարզ է, թե այս տեսակետից վորքան մեծ սխալ են գործում այն գյուղացիք, վորոնք ուշացնում են հողերի հերկը:

Իսկ թե վորքան մեծ է հողերի վաղ կամ ուշ հերկելու ազդեցությունը բերքի վրա, ցույց են տալիս Պալտավայի փորձնական կայանի մի շարք տարիների փորձերը:

Վաղ (ապրիլին) հերկված 1 դես. հողամասից ստացված է 117 փ. աշնան ցորեն:

Մայիսին հերկված 1 դես. հողամասից ստացված է 113 փ. աշնան ցորեն:

Հունիսին հերկված 1 դես. հողամասից ստացված է 81 փ. աշնան ցորեն:

Այսպիսով, ապրիլի և հունիսի ցելերի բերքի տարբերությունը 36 փութ է, իսկ ընդհանրապես վաղ կատարած ցելերի (ապրիլի և մայիսի) բերքի տարբերությունը—մեծ չէ: Ուրիշ խոսքով, վորքան ուշ է կատարվում հերկը, այնքան ել պակաս է լինում բերքը:

Նույն բանը նկատվում է նաև մեզ մոտ, Վաղարշապատի փորձադաշտի 1926 թ. փորձերը ցույց են տալիս հետևյալը.

Մարտի ցելից հետո (հերկած մայիսի 15-ին)

1 դես. ստացված է 193 փ. աշնան ցորեն.  
319 ,, դարման

Ապրիլի ցելից հետո (հերկած մայիսի 15-ին)

1 դես. ստացված է 180 փ. աշնան ցորեն.  
277 ,, դարման



Մալխի ցեղից հետո (հերկած հունիսի 15-ին)

1 դես. ստացված է 167 փ. աշնան ցորեն.

263 ,, դարման

Գյուղացու (ոգոստոսի) ցեղից հետո

1 դես. ստացված է 122 փ. աշնան ցորեն.

159 ,, դարման:

Այս ավյալները յերևում է, վոր ամենից շատ մեծ բերք ստացվում է մարտի և ապրիլի ցեղերից հետո, իսկ ամենից ցածր՝ գյուղացու (ոգոստոսի) ցեղերից հետո: Ընդհանրապես, վորքան ուշ է կատարված հերկը, այնքան բերքն ավելի պակաս է ստացվում, և մարտի ու ոգոստոսի ցեղերի բերքը տարբերութունը 71 փուլ ցորեն և 160 փ. դարման է կազմում:

Ուրեմն, միանգամայն պարզ է, թե ինչու պետք է վիկն աշնանից ցանել և հատկապես ցանել աշնանացան թավոտ վիկ, — վորովհետև զարնանը նա շուտ կքաղվի և հնարավորութուն կտա վաղ զարնանն էլ հողը հերկել ու պատրաստել՝ աշնանը ցորեն ցանելու համար:

Այսպիսով, գյուղացին իր միևնույն հողամասից թե վիկ է ստանում և թե հողն էլ, վաղ զարնանը հերկելու շնորհիվ լավագույն ձևով հանգստացնում է՝ աշնանը ցորեն ցանելու համար:

Վիկը զարնանը ցանելու դեպքում մենք այս հնարավորութուններից զրկված ենք լինում:

Ուրեմն, ցանքաշրջանառության տեսակետից հետևյալ պատկերն է ստացվում. այն հողամասը, վոր պարարտացնելու նպատակով պետք էր «խամ» թողնվեր, աշնանից թավոտ վիկ են ցանում, վերջինս վաղ զարնանը հրնձում են, իսկ հողամասն ապրիլի վերջերին

անմիջապես հերկում և ցել են թողնում մինչև աշուն. աշնանն այդ հողամասում ցորեն են ցանում, իսկ զրանից հետո, այսինքն, 3-րդ տարին կարելի է զարնանացան անել. այսպիսով, տեսնում ենք թե, ինչպես սովորական յեռագաշար բարեփոխվում է. վերացվում կամ կըրճատվում է խամը և ընդհանրապես հեշտանում է 4-5 դաշտյան ձևին անցնելը:

Վիկին տեղ կարելի է հատկացնել և 2-հացաբույսերի մեջ. այսինքն՝ ցանել աշնանացան ցորենից հետո (2-րդ տարին), իսկ վիկից հետո ցանել վորևէ զարնանացան:

Մեր լեռնային շրջանների գյուղացիությանը կառավարելիքը ցանքաշրջանառության մեջ մտցնել մեր լեռներում տարածված բազմաձև վիկը, վորի սերմերը մեծ քանակությամբ կարելի կլինի հավաքել ամուսնավ սկզբներին: Բազմաձև վիկը կարելի յե թե աշնանացան և թե զարնանացան ցորենի հետ ցանել: Ս. Հայաստանի Պետական համալսարանի հողամասում մեր կատարած փորձերը ցույց տվին, վոր բազմաձև վիկն առաջին տարին շատ դանդաղ է զարգանում, միայն ցորենները հնձելուց հետո է նա սկսում ուժեղանալ, իսկ հետևյալ տարին արդեն կտա 1-2 բերք:

Ինչ առավելութուն ունի ցանքաշրջանության մեջ բազմաձև վիկ մտցնելը:

1. Հողամասը խամ թողնելու փոխարեն բազմաձև վիկ ցանելու դեպքում գյուղացին մեծ քանակությամբ խոտ կստանա, բան այդ ստացվում է սովորական. միամյա վիկ ցանելու դեպքում:

2. Բազմաձև վիկը ցանում են ցորենի հետ (զարնանը կամ աշնանը). առաջին տարին ստա-



նուսմ են ցորենի բերք, իսկ 2-րդ տարին պատ-  
քաստ ելինում վրկի արտը, վորը կարելի է  
հնձել մեկ կամ չերկու անգամ:

Այսպիսով, մենք տնտեսում ենք բավական-  
նաչափ գույնար, վորովհետև վրկի համար հո-  
ղամասը հատկապես վնչ հերկում են և վնչ  
ել փոցխում:

3. Բաղմամյա վրկն ավելի լավ գարդացած  
և խոր գնացող արմատներ ունի, քան միամյա  
վրկը, ուստի նա ավելի լավ կողատարածի հողի  
ցածր շերտերի սննդանյութերը, մանավանդ  
խոնավութունը, ուրեմն ջրի պահասութունից  
չի տուժի, մի բան, վոր շատ կարևոր է մեր  
լեռնային ավելի շոր շրջանների համար:

Վրկը կարելի է նաև խոզանացան անել,  
այսինքն՝ հացաբույսերը հնձելուց հետո անմի-  
ջապես ցանել: Մեր պայմաններում խոզանացան անելու  
գեպում, շատ շրջաններում կարելի կլինի մինչև աշուն  
ստանալ մի բերք, իսկ յեթե բերքը շուտ հավաքվի, հե-  
տևյալ տարին կարելի կլինի 1-2 անգամ հնձել (չեթե  
ցանված են թավոտ վրկի համապատասխան տեսակները):

Ռուսաստանում շատ ուժասպառ յեղած հողերը, վո-  
րոնք հանգստացնելու նպատակով պիտի խամ թողնվեն, աշ-  
նանից պարարտացնում են գոմաղբով, իսկ գարնանը վրկ  
են ցանում: Բայց պարարտացնում են վոչ թե վրկի հա-  
մար, այլ նրան հաջորդող աշնանացանի կամ գործա-  
նացանի համար:


Վրկ ցանելու համար չերք պիտի հողը  
հերկել:

Աշնանացան թավոտ վրկը ցանելու համար հողամասը  
հերկում են ամառվա վերջին՝ ոգոստոսին կամ սեպտեմ-  
բերին՝ հացահատիկները հնձելուց հետո:

Գարնանացան վրկի համար հերկել կարելի չե թե

աշնանը և թե գարնանը: Խոնավ կլիմայական և հողային,  
պայմաններում ավելի լավ է գարնան հերկը, իսկ ավելի  
չորային պայմաններում՝ գերադասելի է աշնան հերկը:  
Աշնանը հերկած հողը ավելի փուխը կլինի, շատ խոնա-  
վութուն կունենա իր մեջ և սուլխոտերից ել վորոշ շա-  
փով ազատ:

Յեթե հողամասը հերկած է աշնանը, ապա գարնանը  
սովորաբար կրկնահերկ չեն անում. վրկի սերմերը խառ-  
նում են գարու կամ վարսակի հետ և շաղ են տալիս,  
հետո սովորական փոցխով սերմը ծածկում են: Սերմերը  
կարելի է ծածկել նաև 4 խոփանի գութանով, վորը  
սերմերը ծածկում է 1—1 1/2 վերջ: խորութամբ:



Նկ. 4. Չորս խոփանի գութան

Ընդհանրապես վրկը հերկի վերաբերմամբ այնքան ել  
պահանջկոտ չէ: Դրա համար ել չերբեմն վրկը խոզանա-  
տեղում ցանելիս չեն հերկում. հացահատիկները հնձե-  
լուց հետո վրկը վորեւ հացահատիկի հետ խոնոնելով  
շաղ են տալիս խոզանի մեջ և ապա թեթե գութա-  
նով, կամ արորով հերկում են՝ սերմերը ծածկելու  
ու հողը փխրացնելու համար:

Այս տեսակետից խոզանացանի համար շատ լավ են  
4 խոփանի գութանները, վորոնք մոտ մի արշին լայն շեր-



տալ և 1<sup>1</sup>/<sub>2</sub> — 2 վերջով խորությամբ են հերկում և մեծ ել ուշ չեն պահանջում. բավական է 2-3 գուլգ տավար կամ 1-2 գուլգ ձի. մեկ որում աղբիսի գութանը կարող է մեկ դեպիստինից ավելի հերկել:

Վիկը հացահատիկների հետ ցանելիս ավելի լավ է ցանել վոչ թե միասին՝ սերմերը խառնելով, այլ առանձին և խաշած. մեկը պիտի շաղ տալ ըստ լերկաչնության, մյուսը՝ ըստ լայնության և հետո փոցխել: Այս դեպքում ավելի հավասար ցանք կստացվի և վիկն ու հացաբույսերը իրար չեն վնասի: Բայց սովորաբար վիկը հացահատիկները հետ խառն են ցանում:

Յերբեմն վիկը շարքացանով էլ են ցանում, բայց այդ դեպքում վիկի և հացահատիկների սերմերը հավասար կերպով չեն ընկնում հողի մեջ: Իրա համար էլ շարքացանով ցանելիս առաջ վիկն են ցանում — նախապես մեկու մեջ փակելով շարքացանի անցքերը, ախպես վոր 11 շարքանի մեքենան դառնում է 6 շարքանի: 2-3 շաբաթից հետո, յերբ վիկն արդեն լավ կանաչած է լինում, նույն ձևով արդեն ցանում են աշորան կամ գարին, բայց այս դեպքում մեքենան ախպես են քցում, վոր նրա սերմերը ծածկող խոփիկները գնում են չցանված ակողով: Այս դեպքում ստացվում է շատ միահավասար ցանք:

Վիկը ցրտից չի վախենում. այդ պատճառով էլ կարելի է ցանել շատ վաղ գարնանը: Ռուսաստանի փորձերը ցույց են տալիս, վոր թավոտ վիկը ձրմառան ցրտերից բոլորովին չի տուժում, նույնիսկ, յերբ ցրտերը — 20° են հասնում:

Թավոտ վիկը ցանում են ոգոստոսին-սեպտեմբերին: Ընդհանրապես պիտի ասենք, վոր սարերում վիկը պետք է ավելի շուտ ցանել, իսկ դաշտավայրերում՝ ավելի ուշ:

Ցանելուց 8-10 օր հետո, նայած լեղանակներին, վիկի սերմերն սկսում են ծլել: Սկզբնական շրջանում վիկը դանդաղ է զարգանում, բայց մի քանի շաբաթից

հետո, յերբ նրա արմատներն ավելի խորն են գնում և ուժեղանում են, բույսն սկսում է բարձրանալ և ճյուղավորվել:

Յեթե հողամասը մոլախոտերից մաքուր է, ապա շուտով ծածկվում է վիկի բույսերով. նրա ցողունները ձրգվում են դեպի վեր և տերևների ծալքում գտնվող բեխիկների միջոցով կաշում հացաբույսերից ու աղբիսով մրնում կանգուն գրության միջ:

Վիկն առանձին խնամք չի պահանջում:

Ռուսաստանի մի քանի շրջաններում ընդունված է դարնանը ցանքերը փոցխել՝ հողի կեզիք վոչնչացնելու և փխրացնելու համար, վորից հետո վիկի բույսերն սկսում են ավելի լավ զարգանալ:

Մեր յերկրի տաք կլիմայական պայմաններում — մեր դաշտավայրերում և մասամբ էլ նախալեռնային շրջաններում — վիկի ջրելն անհրաժեշտ կլինի:

Ինչ վերաբերում է լեռնային շրջաններին, ապա այնտեղ ջրելու կարիք չի լինի, մանավանդ թավոտ վիկերի համար:

Այս տեսակետից վիկի սովորական, գարնանացան տեսակը դաշտավայրում մշակելն ախքան էլ ձեռնտու չե. նա շատ ջուր է պահանջում:

Այդ շրջաններում ավելի ձեռնտու է աշնանացան թավոտ վիկ ցանել, վորն անհամեմատ ավելի քիչ ջուր է պահանջում և ավելի շուտ է հասնում:

Համենայն դեպս, թավոտ վիկն աշնանացան ցորենից մեկ կամ յերկու ջուր ավելի կպահանջի: Ջրելը կախված է վոչ միայն վիկի այս կամ այն տեսակից կամ կլիմայական պայմաններից, այլև շատ դեպքում մեծ դեր են խաղում նա և հողերի տեսակները, մշակելու ձևերը, ցանելու ժամանակը և այլն:

Ցանելուց մոտ յերկու ամիս հետո սովորական վիկն սկսում է ծաղկել, իսկ աշնանը ցանած թավոտ վիկն ըսկսում է ծաղկել ապրիլին կամ մայիսին:



Վիկին աշխատում են շուտ հնձել և տեղը հերկել, վորպեսզի մինչև աշնանը ցորեն ցանելը հողն ավելի չեք-կար ժամանակ մնա և հարստանա բույսերի արմատների համար մատչելի հանքանյութերով:

Վիկը հնձում են, յերբ բույսերն սկսում են ծաղկել, ուշացնելու դեպքում ավելի կոպիտ խոտ է ստացվում տերեխիկները թափվում են ու նրանց մեջ յեղած սննդանյութերն էլ ավելի յեն պակասում:

Մանավանդ շուտ պիտի հնձել թափոտ վիկը, վորպեսզի հնարավոր լինի 2-րդ անգամ էլ հնձելու:

Յեթե առաջի հունձը ուշացնում են և բույսն սկսում են սերմակալել, կամ չեթե շատ ցածրից են հնձում, ապա այլևս յերկրորդ բերք չի ստացվում: Ճիշտ է, բոլոր տեսակի վիկերը չի կարելի 2-3 անգամ հնձել: Նրանց մեջ կան վորոշ ձևեր, վորոշ տեսակներ, վորոնց ճյուղավորման հանգույցները կամ կետերը միմիանց ավելի մոտ են և գտնվում են զլխավոր ցողունի ավելի ցածր մասերում:

Իաշտավարության հետազոտությունը ցույց տվեց, վոր վիկի այս տեսակներով, թե միամյա և թե բազմամյա խմբերին պատկանող, մեր չերկիրը բավականի հարուստ է, միայն անհրաժեշտ է նրանց առանձնացնել, բազմացնել և տարածել:

Այս ուղղությամբ ի միջի այլոց հետազոտություններ կատարում է նաև Ս. Հայաստանի Պետական արտաբերական վոր Յերկրագործության կաբինետը, ուր ուսումնասիրվում են մեր չերկրի տարբեր շրջանների հացաբույսերի մեջից հավաքած բազմամյա և միամյա դաշտամուղախոտային վիկերի տեսակները:

Վիկը հնձում և չորացնում են ձիշտ այնպես, ինչպես առվույսը: Շատ խոնավ շրջաններում, վորտեղ անձրևներ հաճախ են գալիս, հնձած խոտը չորացնելու համար գործ են ածում փայտից պատրաստած հենարաններ:

Յեթե վիկ ցանում են սերմ ստանալու համար, այդ դեպքում հնձում են, յերբ բույսերը սոտ 50<sup>0</sup> -ով սերմա-կալած են լինում. սպասել, վոր բույսերի վրա յեղած բո-լոր ունդերը հասնեն - չի կարելի, վորովհետև վիկը միա-ժամանակ չէ ծաղկում, հետևապես և միամյամանակ էլ չի սերմակալում: Այն ժամանակ, յերբ վարի մասի պատիճ-ները (ունդերը) արդեն հասած են լինում, բույսերի վերի մասում դեռ ծաղիկներ են գտնվում: Վարի հա-սած պատիճները հեշտությամբ բացվում են և սերմերը թափվում են գետին Այսպիսով, հունձը ուշացնելու դեպ-քում՝ մենք կզրկվենք սերմերի մեծ մասից:

Յեթե վիկը վարսակի հետ ցանվում է դարձանը, ապա պետք է վերցնել վարսակի շուտ հասնող տեսակ-ները, վորպեսզի սերմի համար վիկը հնձելիս վարսակն էլ հասած լինի: Գարին և աշորան սովորաբար վիկի հետ միասին են հասնում:

Սերմի համար վիկը հնձելուց հետո խուրձեր են կա-պում և վորոշ ժամանակ կալում չորացնելուց հետո, սովորական ձևով կալում են, ինչպես ցորենը կամ գարին:

Քամհար մեքենայի միջոցով բաժանում են դարձա-նից և հետո վիկի մաքուր սերմեր ստանալու համար սերմերի խառնուրդը անց են կացնում սովորական զը-տիչ մեքենայով, վորը հացաբույսերի սերմերը մաքուր կերպով բաժանում է վիկից:


Շատ չըջաններում այս գալիչ մեքենաներին (триер. змейка և այլն) (տես նկար 5 և 6,) մեր գյու-ղացիությունն արդեն ծանոթ է. այս մեքենաներով նը-րանք մաքրում են իրենց սերմացուն:

Սերմագալիչ մեքենաները բավականի թանգ են և միայն կոոպերացիան է, վոր հնարավորություն կտա գյուղացուն, ոգտվել նրանցով: Այս մեքենաները հեշտու-թյամբ կարող են ձեռք բերել կոոպերացված անտեսու-թյունները, արտեխները, մեքենաողտագործող և վարկալին



ընկերութիւնները և այլ կոլլեկտիվ կազմակերպութիւնները:

Այժմ տեսնենք, թե վիկը խոտով ու սերմով ինչքան բերք կարող է ապր: Ի հարկէ, բերքի քանակը կախված է մի շարք պայմաններից, ինչպես հողային, կլիմայական, մշակութայն և այլն:



Նկ. 5. Սերմագոտիչ մեքենա.

Բուն Ռուսաստանի և Ուկրայնայի պայմաններում վիկը մի գեսյատինից տալիս է 200-350 փ. չոր խոտ:


Պալոտավայի փորձնական կայանի մի շարք տարիների փորձերը ցույց են տալիս, վոր մի գեսյատինից միջին հաշվով ստացվում է 292 փ. խոտ, իսկ սերմ՝ 62 փ.:

Ս.Հայաստանի տարբեր շրջաններում վերջին հինգ տարիներում կատարված փորձերն ամենալավ հետևանքներն

են տվել, մանավանդ լեռնային շրջաններում: Ինչ վերաբերում է մեր գաշտավայրին, այստեղ սովորական վիկ ցանելու փորձերը լավ արդյունք չեն տվել:

Այսպես, խորհրդային 3-րդ տնտեսութիւնում (1924 թ.) մեկ գեսյատինից ստացվել էր մոտ 140 փ. խոտ:

Հողօրկումառի նախկին սերմաբուծարանին պատկանող Չարբախի հողամասում, վորտեղ մենք 1924 թ. 1<sup>3</sup>/<sub>4</sub> գես. տարածութիւն վրա սովորական վիկ ելինք ցանել, գեսյատինի հաշվով ստացվեց միայն 270 փ. չոր խոտ:



Նկ. 6. Սերմագոտիչ մեքենա (Змейка)

Չարբախում վիկին տրամադրված հողամասը բավականին պարարտ էր, իսկ սերմաբուծարանի քաղաքային հողերում, վորտեղ վիկ ցանվել էր շատ ծանր կավային և սարուկաուրա շուկեցող հողամասում, շատ թույլ զարգացավ և նույնիսկ չհնձվեց:



Յ Ա Ն Կ

1. Ինչ խոտարույսեր են մշակվում և՛. Հայաստանում . . . . .	3
2. Վիկր յեվ նրա տեսակները . . . . .	5
3. Վիկի մշակութիւնը անցյալում յեվ ներկայում . . . . .	10
4. և. Հայաստանի դաշտա-մոլախոտային վիկի տեսակները	12
5. Վիկի մշակության նշանակութիւնը . . . . .	14
6. Ինչպես են մշակում վիկը . . . . .	20

17. Ռ. Ստեփանյան. — Խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախարը	15 »
18. Հ. Ս. Գառնի. — Գյուղատնտեսական բանվորութիւնը և միջազգային կոմմունիստական շարժումը (սպառ.)	40 »
19. Կ. Խան-Ս. Ղյան. — Ուղեցույց արդյունավետ խոզարուծության	15 »
20. Յերգիեանցով. — Հավաքուծ. և նրա ոգուան (սպառ.)	20 »
21. Ս. Դանելբեգ. — Լավ և ուշ, քան յերբեք (ազրո-պիլես)	20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Կտավատը և կանեփը (սպառ.)	20 »
<del>_____</del>	15 »
2. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անասնբերից փայտեղեն բաց բողակու համար (պաշտոնական)	
25. ԳրոՅ. Ս. Վ. Քալանթար. — Կաթնատու կովի կերակրումը	30 »
26. Ա. Ա. Տրիֆոնով. — Ինչու պետք է ցիլը շուտ պահել	15 »
<del>_____</del>	15 »
<del>_____</del>	
29. Լ. Սուքոսից. — Կովի դատը (ազրո-պիլես)	20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան. — Տիգիկանեփ (սպառ.)	5 »
31. Խ. Տեր-Ներսիսյան. — Պտղատու ծառերի փաստատուներն ու հիվանդութիւնները	25 »
32. Խ. Ս. Վզարբեգյան. — Գյուղի հողաշինարարութիւնը	20 »
33. Արագի. — Տրակտորը (ազրո-պատմվածք)	15 »
34. Յալսագի. — Խորհրդավոր արտունջներ (ազրո-զրույց)	15 »
35. Խճկո-Ա. Աբե. — Գյուղատնտես-անասնարույժը և իր ազրո-զրույցը	20 »
36. Ս. Յրիգալից. — Տասը պատգամ անասնապահին (ը սպառ)	20 »
37. Մ. Խանգազյան. — Մեղվարուծության գործնական ձեռնարկ	60 »
<del>_____</del>	

«Ազգային գրադարան»  
  
 NL0282610



39. Ս. Սքանաչյան. — Գութան, թե՛ արօր (ստղ.) 10 »  
 40. Վ. Բուկով. — Այժմ աղքատի կոմիսի (սպառ.) 20 »  
 41. Խ. Տեր-Ներսիսյան. — Գոմաղբը 20 »  
 42. Խ. Կուզնեցով. — Լենինը և գյուղացիութ. 30 »  
 43. Ս. Մուսեղյան. — Անտառը պետք է հաշվով  
կտրել 5 »  
 44. Խ. Տեր-Ներսիսյան. — Ինչպես պատվաստել  
պաղատու ծառերը 10 »
- 
46. Հ. Ազատյան. — Յեղաղաչության գեղի սոցիալ-  
լիզմ կոոպերացիայի վրայով 1 ու. 50 »  
 47. Վ. Ս. Միրալով. — Տավարի վարակիչ հի-  
վանդու թյունները 5 »  
 48. Մ. Թումանյան. — Վիկը 25 »  
 49. Պ. Քալանթարյան. — Գոմաղբ 5 »

ՊԱՏՐԱՆՏՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ  
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

---

2. Ա. Մարգարյան. — Վոչխարաբուծություն  
 3. Պրոֆ. Ա. Վ. Քալանթար. — Կաթնատու կովի ընտրու-  
թյունը  
 4. Ս. Սքանաչյան. — Գութանները և նրանց ընտրու-  
թյունն ու խնամքը  
 5. Խ. Յերիցյան. — Հորթերի կերակրելու և խնա-  
մելու սպիտակ ձկները  
 6. Ս. Իսահակյան. — Հանրամատչելի գրուպներ  
գինեգործութ. մասին  
 ԳԻՄԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հոգեոգիմատ՝ Հրատարակչության:  
Պետրոսի կենտրոնական լիվ գա-  
վատական գրախանութներին,  
Գավնոցրամ իններին: